

ԿՐՕՆԱԿԱՆ

ՅԱՐՈՒԹԻՒՆ

(Ղև. Խ. 1-5)

«Բրիսնո յարեալ ի մեռեցոց»

Հաղիւ թէ կարելի է երեւակայել մարդկութեան համար աւելի մեծ աւետիս մը քան ասիկա, զոր ամէն հայ Ս. Զատիկ առթիւ կ'ուզէ իր բարեկամներուն. «Բրիսնո յարեալ ի մեռեցոց»:

Ասկէ գրեթէ ճիշդ 1900 տարիներ առաջ հրեշտակներ հաղորդեցին զայն քանի մը կիներու. և անկէ ի վեր միլիոնաւոր մարդիկ այդ աւետիսը կրկնեցին իրարու: Այս կարճ խօսքը ամբողջ պատմութիւն մը կ'ապրեցնէ իր մէջ, որ կ'աւանդուի սերունդէ սերունդ, ամէնէն թանկագին ժառանգութիւնն ըլլալով մարդկային սեռին: Տկարը ասոր մէջ կը գտնէ իր զօրութիւնը, վհատութեան տակ ընկճուողին քաջակերութիւն կու տայ այն. սգաւորը ատով կը մխրթարուի, և մարտիրոսը անկէ կը ստանայ իր արժանիքը:

Պահ մը երեւակայենք թէ ի՞նչ տեսակ աշխարհ մը ու կեանք մը պիտի ունենայինք եթէ յարութիւնը չըլլար մահէն յետոյ: Ի՞նչ մութ պիտի ըլլար մեր աշխարհարէր եթէ արեւը երեկոյին մարը մտնելէն յետոյ յաջորդ առտուն ալ չծագէր: Ո՞ր պիտի մեռելութիւն պիտի տիրէր երկրի վրայ եթէ ձմեռուան ձիւներուն տակէն խոտ ու ծաղիկ չծլէին դարձեալ: Ընդ առտոր համար է որ հեթանոս ժողովուրդներ արեւը աստուածացնելով կը պաշտէին, և զոհեր կը մատուցանէին մայր երկրին, որոնց ծոցէն կը բխէր կեանքի անսպառ զօրութիւնը: Մեր նախահայրերն ալ, քրիստոնէութեան լոյսը ճանչնալէ առաջ, նոյն հաւատքն ունէին բնութեան և անոր ոյժերուն մասին: Անոնք ալ կը պաշտէին արեւն ու մայր երկիրը: Անոնք ալ կը հաւատային յարութեան և կերպով մը՝ նաեւ յաւիտենական կեանքի: Մեր ժողովրդական զիւլագնեւէն մին, Մհեր, որ առաջ Միհր անունով իբրեւ աստուած կը պաշտուէր հայ ժողովուրդին մէջ, շատ յատ-

կանչական պատմութիւն մ'ունի: Անիկա օր մը քարայրի մը մէջ կը մտնէ և իր ետեւէն կը փակուի ժայռէ հակայ դուռը և Մհեր կը բանտարկուի հոն: Ան ողջ կը մընայ, սակայն, քարայրին մէջ. օր մը դուրս պիտի գայ նորէն և պիտի յաղթէ աշխարհին:

Մարդկային սրտին ցանկալի մէկ յոյսն է ասիկա, որ միւսնոյն ատեն լոյս մըն ալ է անոր առաջնորդութեան համար: Մարդ կ'ուզէ հաւատալ որ մահէն յետոյ ալ պիտի ապրի, և իր կեանքին շաւիղը այդ փրկարար հաւատքին ցոլքերովը կը լուսաւորուի: Յարութեան այս յոյսը որ այնքան հին է ու այնքան ազդու, այս յոյսը, որուն իրականացումը այնքան դժուար է որքան ամուր տպառածէ դժներու բացումը, կը մնայ միշտ իբրեւ հզօրագոյն ազդակներէն մին որ մարդոց կեանքը կը վարեն: Մեր նախահայրերը դարերով ըստպասեցին, բայց չտեսան Մհերի վերերեւումը: Միթէ լոկ ցնճօք մըն էր այդ յոյսը: Ասիկա աղօթ մէկ ստուերը չէ՞ր արդեօք այն իրականութեան, որ օր մը Գողգոթայի գագաթէն պիտի ճառագայթէր լուսաճաճուն հրաշափառութեամբ: Այս հարցումին պատասխանը պիտի գտնենք եթէ փոխադրուինք մտովին դէպի հեռաւոր անցեալը, մեր ներքին աշքերով դիտելու մարդկային պատմութեան մեծագոյն դրուագը:

Տասնեկինը դարեր առաջ, միաշարաթ առառւ մը կ'ոնուխ, քանի մը կիներ տըխուր ու վեհերոտ քայլերով կը յառաջանային պարտէյի մը մէջէն: Գերեզման մը կը փնտռէին անոնք ուր թաղուած էր իրենց Սիրելին: Կ'ուզէին անոր մարմինը օժնել անուշահոտ խունկերով: Բայց ժայռափոր գերեզմանին դուռը մեծ քորով մը դռնուած էր: Իրենց կանացի բազուկները պիտի չզօրէին գլորելու զայն: Ո՞վ պիտի բանար գերեզմանին դուռը իրենց համար: Այս կարգի խորհուրդներով մտաւանջ կը յառաջանային անոնք: Երբ որ գերեզմանին մօտ հասան տեսան որ քարը մէկդի գլորուած էր. ներս մտան և մարմինը չկար հոն: Նոր երկիւղ մը՝ նոր յոյսի մը խառնուած՝ ողորկեց անոնց սիրտը: Խղճալի թէ երանելի կիներ: Իրենց Տիրոջ մարմինը անյայտացած էր: Թափուր գերեզմանին ի տես

ցնցուկեցան սարսուղին: Եւ մինչ հիացած կը մնային ահա երկու լուսազգեստ հրեշտակներ երեցան ու ըսին անոնց. «Ինչո՞ւ կենդանին կը փնտռէք մեռելներու մէջ. հոս է, այլ յարեալ»: Կիներու սրտէն խընդութիւն կը յորդէր: Շտապեցին առաքեալներուն մօտ և հաղորդեցին անոնց մեծ աւետիսը. «Քրիստոս յարեալ ի մեռելոց»: Եւ այդ օրէն ի վեր կը շարունակէ արձագանգել այն տարուէ տարի և դարէ դար, թրթռացնելով մարդկային սրտին բերկրութեան լարերը յաղթապանծ խանդավառութեամբ:

Յարութեան մեծ խորհուրդը կը պարունակէ իր մէջ խորունկ և ընդարձակ իմաստներ: Անոր մէջ կրնանք գտնել անհատ մարդուն՝ միանգամայն եւ ամբողջ մարդկութեան՝ հոգեկան զօրութեանց կեանքի յաւերժական պայքարը: Քրիստոս մը կ'ապրի հոս, մեղաւոր մարդկութեան ծոցին մէջ. մարմնացում մը սիրոյ և սրբութեան, լոյսի և ճշմարտութեան: Բայց ատելութեան և խաւարի որդիներուն բազմութիւնը կը բռնէ զայն, կը չարչարէ, կը խաչէ, կը սպաննէ, կը թաղէ ու մեծ ժայռով մըն ալ կը գոցէ անոր գերեզմանին դուռը: Չարամիտ հնարք և յիմար հաւատք: Միթէ կարելի՞ է մարել կրակը սիրոյ և նսեմացնել փայլը սրբութեան. միթէ հնարաւոր է ամփոփել լոյսը գերեզմանի մը խաւար մէկ խորշին մէջ, և լռուցնել ճշմարտութիւնը քարի մը ծանրութեան տակ: Հապա եթէ ա՛յդպէս ըլլար. եթէ անձնագործ սէրը խաչի մօտ միայն ունենար առանց յարութեան, եթէ կեանքը չիրականացող տեսիլներու ցանկութիւնն ըլլար յաւէտ, եթէ լոյսը գերեզմանի մը չօրս պատերէն անդին չլուսաւորէր, եթէ ճշմարտութիւնը իսպառ լուր ժայռի մը տակ ճնշուած. այն ատեն աւելի լուր էր չապրիլ խաւարի և ստութեան, ատելութեան և մահուան զազրելի բոյն դարձած այդ աշխարհին մէջ: Յուսահատութեան այս հեղձուցիչ մօայլը, սակայն, կը փարատի այն լոյսով որ կը ճառագայթէ Գողգոթայի գերեզմանէն: Յարութեան տօնը ամէն տարի կու գայ մեզի յիշեցնելու թէ կեանքն ու անոր արժէքը կազմող զօրութիւնները պիտի տանին վերջնական յաղթանակը: Քրիստոսի յարութիւնը մեզ

կը վստահացնէ թէ քրիստոնեան ու քրիստոնէութիւնը պիտի ապրին յաւէտ:

Արդ նայինք անգամ մը ազգերու պատմութեան վրայ ու պիտի տեսնենք թէ ինչպէս անիրաւ ու բռնաւոր ազգեր մէկը միւսին ետեէն կը թաւալին կ'իյնան. թէ ինչպէս խաւարին մէջ գործող ստութեան ոյժերը հետզհետէ լոյսի առջև կու գան ու կը դատապարտուին մարդկային խղճմտանքին կողմէ: Անտեսանելի Արդարութիւնը կը գործէ շարունակ իր անաչառ ու անյեղլի օրէնքներուն համաձայն և կը հատուցանէ իւրաքանչիւրին իր գործերուն համեմատ: Հաւատանք ստոր:

Ազգերու կեանքին մէջ իրականութիւն մը եղող այս գործունէութիւնը իրականութիւն մըն է նաեւ անհատներու կեանքին մէջ: Ահաւասիկ մարդ մը, որուն հոգւոյն մէջ հակընդդէմ զօրութիւններ պայքար կը մղեն շարունակ: Կայ իր մէջ բարութեան, ճշմարտութեան, սրբութեան, սիրոյ և ներողամտութեան գիտակցութիւնը: Բայց իր մէջ կայ նաեւ չարութեան, ստութեան, պղծութեան, ատելութեան և վրէժի ցանկութիւնը: Իր հոգեկան զօրութիւններուն վատ մասը աւելի զարգացած է ու զօրացած՝ իր ապրելու սխալ կերպին միջոցաւ. իսկ լուսազոյն մասը դատապարտուած է չեղքացումի: Իր մէջ գտնուող հակաքրիստոսը մութ անկիւնի մը մէջ փակած է ինչ որ լուսաւոր ու բարի է իր ներսիդին: Քրիստոսը, որ իր մէջ պիտի ապրէր ու գործէր, կը մնայ թաղուած:

Այսօր Քրիստոսի յարութեան տօնը մեզի կը ներկայացնէ սա հարցումը. «արդեօք Քրիստոս դեռ թաղուած է սրտիդ գերեզմանին մէջ, թէ յարութիւն առած է ու կ'ապրի»: Եթէ տակաւին թաղուած է ժամանակ մի կորսնցներ, առ անուշահոտ իւղեր, բաց սիրտդ որ օծես զԱյն: Միթէ դո՞ւն ալ կը խորհիս թէ ո՞վ պիտի զլորէ գերեզմանին քարը՝ քու մեղքերուդ ծանրութիւնը բովանդակ. մի՛ կանգ առներ. դո՞ւն ալ յառաջացիր յոյսդ Աստուծոյ վրայ դրած, և Աստուծոյ հրեշտակը, Ս. Հոգին շնորհքը, պիտի օգնէ քեզի: Այն ատեն Քրիստոսի յարութեան աւետիսը քո՛ւ ալ կեանքիդ յարութեան աւետիսը պիտի ըլլայ:

ՆՈՐԱՅՐ ՎԱՏԴԱՊԵՏ